



ՎԵՈՆ Չայաստան գնման միջոցառումների մասնակիցներ
հրահանգների ընդհանուր դրույթներ

**ՎԵՈՆ Չայաստան մատակարարի Բաց
որակավորման և Մրցակցային ընտրության
բոլոր ընթացակարգերի շրջանակներում
կիրառվող ընդհանուր դրույթներ**

Բովանդակություն

1. *Տերմիններ և հապավումներ***Error! Bookmark not defined.**
2. *Ընդհանուր դրույթներ*.....**Error! Bookmark not defined.**
3. *Հարցեր, հստակեցումներ, առաջարկների փոփոխումը և հետ կանչումը* **Error! Bookmark not defined.**
4. *Պատվիրատուի իրավունքները***Error! Bookmark not defined.**
5. *Մասնակցի որակագրկումը*.....**Error! Bookmark not defined.**
6. *Այլ*.....**Error! Bookmark not defined.**

1. Տերմիններ և հապավումներ

Գնման միջոցառում	Մատակարարների Բաց որակավորման և/կամ Մատակարարի մրցակցային ընտրության գործընթաց, որը նկարագրված է ՎԵՈՆ Յայաստան Լոկալ կատեգորիաների գնումների՝ գնման միջոցառումների կազմակերպման գործընթացի կանոնակարգում (որը հրապարակված է https://beeline.am/am/nav/partners հղմամբ)
Գնման փաստաթղթեր	Գնման միջոցառման մատակարարներին ուղարկվող և հրապարակվող հայտարարություն և այլ փաստաթղթեր
Մասնակից	Մատակարարների Բաց որակավորմանը մասնակցող կամ մասնակցությանը հրավիրված ընկերություն:
Պատվիրատու	ՎԵՈՆ Յայաստան
Առաջարկ	Գնման միջոցառման շրջանակներում Մասնակցի կողմից տրված որակավորող ինֆորմացիայի փաթեթ կամ առաջարկ
Մատակարարի Բաց որակավորում	Մատակարարների որակավորման գործընթաց, որը նկարագրված է ՎԵՈՆ Յայաստան Լոկալ կատեգորիաների գնումների՝ գնման միջոցառումների կազմակերպման գործընթացի կանոնակարգում
Մատակարարի մրցակցային ընտրություն	ՎԵՈՆ Յայաստան Լոկալ կատեգորիաների գնումների՝ գնման միջոցառումների կազմակերպման գործընթացի կանոնակարգում նկարագրված կոնկրետ պատվերի հիման վրա Մատակարարի ընտրության գործընթաց
Փոխկապակցված անձ	Ընկերություն, որն ուղղակի կամ անուղղակի, մեկ կամ մի քանի միջնորդների միջոցով, հսկում կամ հսկվում է կամ այլ Մասնակցի ընդհանուր հսկողության ներքո է: Նշված սահմանման շրջանակներում Յսկողությունը նշանակում է՝ ուղղակի կամ անուղղակի տնօրինումը՝ հսկողության կամ ընկերության գործունեության ու քաղաքականության հսկողությանը միջամտելու իրավունքով՝ պայմանագրի ուժով կամ այլ ձևով,

	քվեարկող բաժնետոմսերի տնօրինման միջոցով:
Ռիսկերի գնահատում	Ռիսկերի գնահատումն իրականացվում է Պատվիրատուի Անվտանգության ծառայության կողմից՝ փոխգործակցության ռիսկերի առկայության (բացակայության) վերաբերյալ
Գնման կատեգորիա	Գնման առարկան
Շուկայի էական փոփոխություն	Փոփոխություններ շուկայում, որոնք կարող են գների իջեցման նախապայման ստեղծել

2. Ընդհանուր դրույթներ

- Գնման փաստաթղթերում ներկայացված գնման ծավալը կանխատեսական է, օգտագործվում է բացառապես Մասնակիցների առաջարկների համեմատության համար և չի նշանակում, որ Պատվիրատուն պարտավոր է ձեռք բերել հենց այդ քանակությամբ ապրանքներ: Տվյալ ծավալը նաև չի նշանակում, որ Պատվիրատուն պարտավոր է տեղադրել պատվերներ որևէ նվազագույն ծավալով:
- Մասնակցի կողմից Գնման փաստաթղթերի որևէ բաժինների կամ մասերի միջև տարընթերցումների հայտնաբերման դեպքում Մասնակիցը պարտավոր է անհապաղ Գնման փաստաթղթերում նշված կոնտակտային անձից պարզաբանում խնդրել:
- Ներկայացնելով առաջարկը՝ Գնման միջոցառումների մասնակիցները տալիս են իրենց համաձայնությունը ընկերության ֆինանսական կայունության ստուգման և պարտավորությունների չկատարման ռիսկերի գնահատման համար:

2.1. Մատակարարի Բաց որակավորում

- Մատակարարի Բաց որակավորման ընթացակարգի արդյունքներով պայմանագիր կարող է չկնքվել, Մասնակիցը ստանում է «Որակավորված» կարգավիճակը և հրավիրվում է մատակարարի մրցակցային ընտրության բոլոր փուլերին, որոնք առնչվում են այն կատեգորիային, որի համար նա ստացել է «Որակավորված» կարգավիճակը Մատակարարի Բաց որակավորման արդյունքների գործողության ժամկետի ընթացքում:
- Մասնակցին «Որակավորված» կարգավիճակ տալուց յուրաքանչյուր 6 ամիսը լրանալուց հետո Պատվիրատուն իրավունք է վերապահում իրեն անցկացնելու ռիսկերի գնահատման լրացուցիչ փուլեր:
- Պատվիրատուն իրավունք է վերապահում իրեն անցկացնել Մատակարարի Բաց

ՎԵՈՆ Չայաստան գնման միջոցառումների մասնակիցներ հրահանգների ընդհանուր դրույթներ

որակավորման լրացուցիչ փուլեր այն ժամանակ, երբ համարում է նպատակահարմար, ինչպես նաև հետաքրքրված մատակարարները կարող են Բաց որակավորման փաստաթղթերում նշված ժամկետում ուղարկել որակավորված տեղեկատվության փաթեթները: Մատակարարի Բաց որակավորման լրացուցիչ փուլերի արդյունքներով որակավորված մատակարարների ցուցակը կարող է համալրվել նոր մատակարարներով, որոնք նույնպես հրավիրվում են տվյալ կատեգորիայով Մատակարարի մրցակցային ընտրության փուլին:

2.2. Մատակարարի մրցակցային ընտրություն

- Ռեզիդենտ մասնակիցները տրամադրում են կոմերցիոն առաջարկը ՀՀ դրամով (AMD): Բոլոր գումարները նշվում են առանց ԱԱՀ:
- Ոչ ռեզիդենտ մասնակիցները տրամադրում են կոմերցիոն առաջարկը ԱՄՆ դոլարով (USD) կամ այլ փոխակերպվող արժույթով: Բոլոր գումարները նշվում են առանց ԱԱՀ:
- Կճարման տարբեր պայմաններով կոմերցիոն առաջարկների համեմատումն իրականացվում է հաշվի առնելով Պատվիրատուի ազատ շրջանառու միջոցների եկամտաբերությունը:
- Պահուստային մատակարարը կարող է ներգրավվել հաղթողի որակագրկման դեպքում կամ պայմանագիր կնքելուց կամ պայմանագրային պարտականությունները կատարելուց հաղթողի հրաժարվելու դեպքում:
- Արգելվում է Մատակարարի մրցակցային ընտրության փուլին այն Մասնակիցների մասնակցությունը, որոնք հաստատված են միևնույն անձի կողմից, եթե մատակարարները փոխկապակցված են:
- Ստորագրված շրջանակային պայմանագրի շրջանակներում պատվերների տեղադրման դեպքում ոչ ռեզիդենտ մասնակիցների նկատմամբ կկիրառվի պատվետի գումարը շտկող գործակից: Հաշվարկը նկարագրված է ստորև:

Նշանակություններ	Իրադարձություններ	Հաշվարկի բանաձև
Գ` Պատվերի գումարը ճշտագրտող գործակից ԿՓ` Կշռված փոխարժեք (փոխարժեքը առաջարկների տրամադրման օրվա դրությամբ ՀՀ ԿԲ համաձայն)	1. ՊՓ աճել է ոչ ավել, քան 10%-ով ԿՓ նկատմամբ: ՎԵՈՆ Չայաստանը իր վրա կվերցնի փոխարժեքի տարբերությունը և կվճարի գնացուցակում համաձայնեցված գումարը Մասնակցի առաջարկի արժույթով:	Ճշտագրտող գործակից չի կիրառվում

ՎԵՈՆ Հայաստան գնման միջոցառումների մասնակիցներ
հրահանգների ընդհանուր դրույթներ

<p>ՊՓ՝ Պաշտոնական փոխարժեքը վճարման իրականացման օրվա դրությամբ (ՀՀ ԿԲ համաձայն)</p>	<p>2. ՊՓ աճել է ավելի քան 10%-ով ԿՓ նկատմամբ (այսինքն՝ $\text{ՊՓ} > \text{ԿՓ} * 1.1$): 10%-ից ավելի փոխարժեքի փոփոխության դեպքում պատվերի գումարի նկատմամբ կկիրառվի գործակից (Գ) պատվերի գումարը ճշտագրտելու համար (կիրառվում է միայն 10% գերազանցող մասը):</p>	<p>$\text{Գ} = 2.1 \cdot \text{ՊՓ} / \text{ԿՓ}$</p>
---	---	---

- Տարբեր արժույթներով առաջարկները կբերվեն մեկ արժույթի, և նախնական վերլուծություն կանցկացվի կոմերցիոն առաջարկի ընդունման օրվա դրությամբ գործող ՀՀ Կենտրոնական Բանկի (ՀՀ ԿԲ) տարադրամի փոխարժեքով:
- Ռեզիդենտ
մասնակիցների և ոչ ռեզիդենտ մասնակիցների առաջարկները կհամեմատվեն հաշվի առնելով լրացուցիչ լոգիստիկայի ծախսերը, որոնք կառաջանան Մատակարարի մոտ DAP պայմաններով մատակարարման դեպքում:
- Ծառայությունների դեպքում ՀՀ հարկային օրենսդրության համաձայն կիրառվում է ոչ ռեզիդենտի շահութահարկ 20%-ի չափով ոչ ռեզիդենտ ընկերության կողմից Ծառայությունների մատուցման դեպքում: ՎԵՈՆ Հայաստանը, գործելով որպես ոչ ռեզիդենտ ընկերության գործակալ, պահում է վճարման ենթակա համապատասխան գումարներից ոչ ռեզիդենտի շահութահարկը և վճարում է ոչ ռեզիդենտի շահութահարկը ՀՀ պետական բյուջե: Ոչ ռեզիդենտ մասնակցի բնակության երկրի և ՀՀ միջև Կրկնակի հարկումից խուսափելու մասին համապատասխան հայեցակարգի առկայության դեպքում կրկնակի հարկումից խուսափելու մասին հարցը լուծվում է՝ հաշվի առնելով տվյալ Հայեցակարգի դրույթները, ՀՀ հարկային օրենսդրության դրույթները, ծառայությունների մատուցման ժամկետը, մատուցվող ծառայությունների բնույթը, Ծառայությունների մատուցման եղանակը և այլ անհրաժեշտ տվյալներ: Կրկնակի հարկումից խուսափելու մասին հարցը ճշտելու համար ոչ ռեզիդենտ մասնակիցը համապատասխան նամակով կարող է դիմել Պատվիրատուի կոնտակտային անձին՝ տրամադրելով վերոհիշյալ տվյալները:
- Ապրանքների
դեպքում ոչ ռեզիդենտ մասնակիցները ներկայացնում են իրենց առաջարկները DAP մատակարարման պայմաններով (Incoterms 2010), ռեզիդենտ մասնակիցները՝ DDP մատակարարման պայմաններով (Incoterms 2010):

3. Զարգեր, հստակեցումներ, առաջարկների փոփոխումը և հետ կանչումը

- Մասնակիցների և Պատվիրատուի միջև ողջ հաղորդակցությունն իրականացվում է գնման փաստաթղթերում նշված կոնտակտային անձի հետ Էլեկտրոնային նամակագրության միջոցով:
- Զարգերը, եթե այդպիսիք առաջանան առաջարկի պատրաստման ընթացքում, ընդունվում են Մասնակիցներից ոչ ուշ քան Առաջարկների հավաքման ավարտից երեք աշխատանքային օր առաջ:
- Ստացված հարցերի պատասխանները և հստակեցումները պետք է Պատվիրատուի կողմից տրվեն ոչ ուշ քան Առաջարկների հավաքման ավարտից երկու աշխատանքային օր առաջ:
- Առաջարկների հավաքման ավարտից հետո Մասնակցի առաջարկում ցանկացած փոփոխություն, լրացում կամ հստակեցում հնարավոր է միայն Պատվիրատուի հարցումների հիման վրա:

4. Պատվիրատուի իրավունքները

- Պատվիրատուն իրեն իրավունք է վերապահում ընդունել Մասնակցի առաջարկն ամբողջությամբ կամ դրա որևէ մասը:
- Պատվիրատուն իրեն իրավունք է վերապահում մեկնաբանել Մասնակցի առաջարկը՝ Ելնելով սեփական շահերի լավագույնս պաշտպանման տեսանկյունից:
- Պատվիրատուն իրեն իրավունք է վերապահում մերժել Մասնակցի առաջարկը, եթե այն չի ներկայացվել ժամանակին և/կամ եթե չեն պահպանվել գնման միջոցառման այլ ձևական պահանջները:
- Պատվիրատուն կարող է գնման միջոցառումը ճանաչել չկայացած, եթե
 1. Չի ստացվել ոչ մի առաջարկ,
 2. Ներկայացված առաջարկներից ոչ մեկը չի համապատասխանում որակավորման պահանջներին,
 3. Ստացված առաջարկներից միայն մեկն է համապատասխանում Պատվիրատուի պահանջներին,
 4. Այլևս չկա տվյալ գնման անհրաժեշտություն,
 5. Ծագել են անհաղթահարելի ուժի հանգամանքներ, որոնք անհնար են դարձնում գնման հետագա իրականացումը,
 6. Տեղի է ունեցել շուկայի Էական փոփոխություն
 7. Բոլոր ներկայացված կոմերցիոն առաջարկները գերազանցում են գործող շուկայական գները,
 8. Անհնար է գնումն իրականացնել համապատասխան դրամական միջոցների բացակայության պատճառով:

5. Մասնակցի որակագրկումը

- Որակագրկում է կոչվում Պատվիրատուի նախաձեռնությամբ Մատակարարի հետ գնումների, մատակարարումների ոլորտում ցանկացած փոխհարաբերությունից հրաժարումը՝ անցկացվող Մատակարարի ընտրության միջոցառումների շրջանակներում (Մատակարարի հեռացումը Ընկերության պոտենցիալ պայմանագիր կողմերի ցուցակից) կամ կնքվելիք/կնքված պայմանագրի շրջանակներում (պայմանագիր չկնքելը/լուծելը):
- Մասնակցի որակագրկումը կրում է միակողմանի բնույթ:
- Մասնակիցը կարող է որակագրկվել հետևյալ չափանիշներից ելնելով՝
 1. Մասնակցի կողմից աղավաղված, միտումնավոր կեղծ, ոչ ճշգրիտ կամ ոչ ամբողջական տեղեկատվության տրամադրումը՝ *Մատակարարի կողմից մատակարարի ընտրության ընթացակարգի ժամանակ (կամ պայմանագրի շրջանակներում մատակարարի հետ հետագա աշխատանքի ընթացքում) աղավաղված տեղեկատվության տրամադրում, որն ազդել է Մատակարարի առաջարկի կամ պայմանագրի պայմանների տեխնիկական և/ կամ կոմերցիոն գնահատականի վրա:*
 2. Մատակարարի ընտրության արդյունքում ծագած պարտավորությունների կատարումից հրաժարումը.
 - Անցկացված էլեկտրոնային աճուրդի կամ գնման միջոցառումների արդյունքում հաղթած կամ պահուստային Մատակարարը նշված ժամկետում չի հաստատում ավելի վաղ արված դրույթաչափերը, կամ հրաժարվում է դրանցից,
 - Հաղթած կամ պահուստային Մատակարարը չի հաստատում ավելի վաղ արված առաջարկները համաձայն հարցման փաստաթղթերի պայմանների, կամ հրաժարվում է դրանցից,
 - Հաղթած կամ պահուստային Մատակարարը հրաժարվում է պայմանագիր կնքելուց կամ գնացուցակը համաձայնեցնելուց:
 3. Պայմանագրի կամ ձեռքբերման պատվերի պայմանների չկատարելը՝ *Մատակարարը չի կատարում պայմանագրի կամ ձեռքբերման պատվերի պայմանները՝ ժամկետների, ծավալների կամ պայմանագրի այլ էական պայմանների մասով (մատակարարման ժամկետների խախտում, թերի մատակարարում և այլն):*
 4. Խարդախություն/կաշառելու փորձ. *մատակարարը փորձել է կաշառել կամ այլ կերպ շահագրգռել Պատվիրատուի ցանկացած աշխատակցի, որն անմիջականորեն ազդում է մատակարարի ընտրության վրա (ըստ կատեգորիաների գնման հանձնաժողովի, Փորձագիտական խմբի անդամի և ցանկացած այլ աշխատակցի)՝ մատակարարի ընտրության անցկացվող միջոցառումների շրջանակներում այլ մասնակիցների առջև առավելությունների ստացման համար:*

5. Եական տեղեկատվության հրապարակում (Չհրապարակման պարտավորության պայմանների խախտում):

6. Այլ

- Մասնակիցները պետք է ներկայացնեն առաջարկը (բոլոր փաստաթղթերը) հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով.
- Գնման միջոցառման հետ կապված բոլոր հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:
- Առաջարկի ներկայացման փաստը համաձայնություն է այն պայմանի հետ, որ Մասնակցի կողմից ներկայացված նյութերը չեն վերադարձվում: Պատվիրատուն չի փոխհատուցում առաջարկի պատրաստման, պրեզենտացիաների, բանակցությունների անցկացման, թեստավորման և այլնի հետ կապված Մասնակցի ծախսերը:
- Առաջարկ ներկայացնելով՝ Մասնակիցը հաստատում է փոխկապակցվածության բացակայությունը, համաձայն ստորև ներկայացված փաստաթղթի՝



Non-affiliation.docx

- Առաջարկ ներկայացնելով՝ Մասնակիցը համաձայնում է Մատակարարների վարքագծի ընթացակարգին, որը հրապարակված է հետևյալ հղումներով՝

[https://static.beeline.am/upload/images/tenders/actual/arm/Supplier%20Code%20of%20Conduct%20\(ARM\).doc](https://static.beeline.am/upload/images/tenders/actual/arm/Supplier%20Code%20of%20Conduct%20(ARM).doc)

[https://static.beeline.am/upload/images/tenders/actual/rus/Supplier%20Code%20of%20Conduct%20\(RUS\).doc](https://static.beeline.am/upload/images/tenders/actual/rus/Supplier%20Code%20of%20Conduct%20(RUS).doc)

[https://static.beeline.am/upload/images/tenders/actual/rus/supplier%20Code%20of%20Conduct%20\(Eng\).doc](https://static.beeline.am/upload/images/tenders/actual/rus/supplier%20Code%20of%20Conduct%20(Eng).doc)